Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Սերգո Աթանեսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու Անահիտ Ալեքսանդրյանի 2023թ. դեկտեմբերի 7-17-ը Քենիայի Հանրապետություն գործուղման վերաբերյալ**

## 1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Անահիտ Ալեքսանդրյան

## 2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու

## 3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Քենիայի Հանրապետություն (ք. Նայրոբի)
2023թ. դեկտեմբերի 7-17-ը

## 4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր

## 5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն Քիմիական նյութերի և թափոնների հետագա ռացիոնալ կառավարմանը և աղտոտման կանխարգելմանն աջակցելու նպատակով գիտական քաղաքականության բաց կազմի հատուկ աշխատանքային խմբի երկրորդ նիստին և դրան նախորդող ոչ պաշտոնական, տարածաշրջանային և շահագրգիռ կողմերի խորհրդատվություններին:

## 6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

2023 թվականի դեկտեմբերի 11-ից 15-ը մասնակցել եմ Քիմիական նյութերի և թափոնների հետագա ռացիոնալ կառավարմանը և աղտոտման կանխարգելմանն աջակցելու նպատակով գիտական քաղաքականության բաց կազմի հատուկ աշխատանքային խմբի երկրորդ նիստին, որը տեղի ունեցավ Նայրոբիում (Քենիա) ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի կենտրոնակայանում:

2023թ. դեկտեմբերի 9-ին և 10-ին տեղի են ունեցել ոչ պաշտոնական խորհրդատվություններ, տեխնիկական խորհրդակցություններ և տարածաշրջանային և այլ խմբերի նախապատրաստական հանդիպումներ:

Հետագայում քիմիական նյութերի և թափոնների ռացիոնալ կառավարմանը և աղտոտման կանխարգելմանն աջակցելու նպատակով Գիտաքաղաքական փոխգործակցության հարցերով նոր խմբի ստեղծումը կծառայի մոլորակային մասշտաբով եռակի ճգնաժամին գիտական խմբի կողմից եռակի պատասխանի մշակմանը՝ Կլիմայի փոփոխության հարցերով փորձագետների միջկառավարական խմբի և Կենսաբազմազանության ու էկոհամակարգային ծառայությունների վերաբերյալ միջկառավարական գիտաքաղաքական պլատֆորմի հետ միասին: Բաց կազմի հատուկ աշխատանքային խմբին առաջարկվել էր խումբը ձևավորել այնպես, որ այն օգտագործի գիտական նվաճումները, բայց միևնույն ժամանակ սերտ կապեր հաստատի քաղաքականության հետ՝ դրանով իսկ մեծ ազդեցություն թողնելով քաղաքականության վրա: Բացի այդ, խումբը պետք է լինի լայն՝ ներառելով ոչ միայն բնական գիտությունների, այլ նաև տնտեսագիտության, սոցիալական և վարքագծային գիտությունների տեսակետները՝ կենտրոնացած լուծումների վրա և ներառելով տեղական համայնքներն ու բնիկ ժողովուրդները, որոնք հաճախ աղտոտման զոհ են դառնում: Պետք է ներգրավվի նաև աղտոտող արդյունաբերությունը, թեև անհրաժեշտ միջոցների ձեռնարկմամբ՝ շահերի բախումը և լոբբինգը կանխելու համար:

Առողջության համար կանխարգելելի էկոլոգիական ռիսկերը տարեկան ավելի քան 13 միլիոն մարդկանց մահվան պատճառ են դառնում և կազմում են հիվանդությունների համաշխարհային բեռի մեկ քառորդը: Ավելի մեծ ջանքեր և նորարարություններ են անհրաժեշտ նման հետևանքները կանխելու, կարողությունների բացերը վերացնելու և զարգացման տարբեր փուլերում գտնվող երկրների հատուկ մարտահրավերները հաշվառելու համար:

Հանդիպման օրակարգում ներառված էին հետևյալ հիմնական հարցերը.

- **Պաշտոնատար անձանց ընտրություն**

Արևելյան Եվրոպայի երկրների անունից ելույթ ունեցող ներկայացուցիչը հայտարարեց, որ, չնայած միջնստաշրջանային շրջանում ինտենսիվ խորհրդատվություններին, տարածաշրջանային խումբը չկարողացավ կոնսենսուսի հասնել այս հարցում: Հետևեց երկար քննարկում:

Բյուրոյի անդամների ընտրության հարցը բարձրացվել է լիագումար նիստում և գաղտնի քվեարկության արդյունքում, որին մասնակցել են ՄԱԿ-ի բոլոր տարածաշրջանները, ընտրվել են Ռումինիայի և Ուկրաինայի ներկայացուցիչները:

- **Գիտաքաղաքական փոխգործակցության հարցերով խումբ ստեղծելու վերաբերյալ առաջարկությունների պատրաստում**

Ինստիտուցիոնալ մեխանիզմների առումով նիստն ընդգծեց խմբի աշխատանքներին դիտորդների ավելի մեծ մասնակցության անհրաժեշտությունը՝ միաժամանակ հարգելով ընդունելության և մասնակցության ընթացակարգի կանոնները: Առաջարկվել է նաև ավելացնել զարգացող երկրների փորձագետների թիվը, ովքեր կմասնակցեն նոր խմբի կողմից հրապարակվելիք տեխնիկական հաշվետվությունների քննարկմանը և գնահատմանը, ինչպես նաև ապահովել առողջապահության և բնապահպանական ոլորտների փորձագետների հավասար ներկայացվածությունը:

- **Գիտաքաղաքական փոխգործակցության հարցերով խմբի ստեղծման վերաբերյալ առաջարկությունների օրինակելի կառուցվածքը և տեքստի նախագիծը**

Բյուրոյի ղեկավարությամբ քարտուղարությունը պատրաստել է նոր խմբի ստեղծման համար առաջարկների օրինակելի կառուցվածք, որի մշակման ընթացքում հաշվի են առնվել գիտաքաղաքական փոխգործակցության գոյություն ունեցող մեխանիզմների օրինակներն ու փորձը, ինչպես նաև այդ փոխգործակցության կառուցվածքը: Օրինակելի կառուցվածքի առաջին մասը ներառում է խմբի ձևավորման հիմնարար տարրերը, մասնավորապես՝ առարկան, նպատակները և գործառույթները. աշխատանքի սկզբունքները, ինստիտուցիոնալ մեխանիզմները: Երկրորդ մասը պարունակում է լրացուցիչ տարրեր՝ հավելվածների տեսքով՝ նոր խմբին առաջնորդելու համար:

- **Գործունեության առարկա, գործառույթներ, աշխատանքի սկզբունքներ և շահերի բախում**

Ելույթ ունենալով մի քանի դիտորդական խմբերի անունից՝ դիտորդներից մեկն ասաց, որ նոր խմբի շրջանակը պետք է լինի լայն և ընդգրկուն, քանի որ խումբը պետք է ուսումնասիրի հազարավոր քիմիական նյութեր: Ինչ վերաբերում է հետազոտությանը, որը կանցկացվի նոր խմբի կողմից, ապա պարզ չէ՝ այն հիմնված կլինի առաջնային տվյալների վրա, թե փորձագիտական գնահատում անցած հետազոտությունների վրա:

- **Ինստիտուցիոնալ մեխանիզմներ**

Ներկայացնելով փաստաթղթերը՝ քարտուղարության ներկայացուցիչն ասաց, որ ինստիտուցիոնալ մեխանիզմները կսահմանեն խմբի գործունեության հիմնական առանձնահատկությունները, ներառյալ ղեկավար մարմինը (պլենում), վերահսկիչ մարմինը (բյուրոն), փորձագետների միջառարկայական կոմիտեն՝ գիտական խորհրդատվություն տրամադրելու համար, և այլ հնարավոր օժանդակ մարմիններ և քարտուղարություն:

## 7. <u>ԱՐԴՅՈՒՆՔԸ</u>

Ընթացիկ նիստի ընթացքում ավելի մեծ հստակություն ի հայտ եկավ խմբի շրջանակի և գործառույթների, ինչպես նաև նրա աշխատակարգի վերաբերյալ, ներառյալ անհրաժեշտ ինստիտուցիոնալ մեխանիզմների նկարագրությունը:

Սահմանվել են.

- փորձագետների որոնման և ներգրավման կարգը,

- խմբի աշխատանքի արդյունքների քննարկման և հաստատման ընթացակարգերը:

Իրավախորհրդատու՝ [signature] Անահիտ Ալեքսանդրյան